ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՎԱՆԴՆԵՐԸ

Ժողովուրդների հոգևոր մերձեցմանը մեր օրերում, ըստ ամենայնի, նպաստում են մշակութային արժեքները՝ գրականությունը, երաժշտությունն և արվեստի այլևայլ բնագավառների անկրկնելի ու անմահ հուշարձանները, որոնք մարդկության գեղագիտական պահանջմունքները բավարարող հանապազօրյա հաց են ոչ միայն ներկայի, այլև գալիքի համար։

Դյուրությամբ պատռելով ազգային սահմանները, նրանք ազատորեն թռվածում են ողջ աշխարհում, խանդավառում և ազնիվ գործերի ու խոհերի տրամադրում շատերին։ Արդեն չի էլ կարելի պատկերացնել որևէ քաղաքակիրթ ազգ, որը որոշակի ներդրում չունենա համընդհանուր մշակույթի գանձարանը, իր հոգու և մտքի, աշխարհընմբռնումների ու բաղձանքների հարազատ դրսևորումներով չկարողանա հուզել մարդկությանը, անկախ նրանից, թե աշխարհագրական ո՞ր գոտում և ազգագրական ո՞ր միջավայրում են ծլարձակել տվյալ խոհերն ու երազանքները։

Գրականության և արվեստի մեծ ու անմահ վարպետներից շատերը նաև հումանիստ մտածողներ ու անձնուրաց հայրենասերներ են, ազգերի ու ժողովուրդների քաղաքական աղատագրության, բարոյական ազնվացման և հոգևոր մերձեցման ջատագովներ։ Խաչատուր Աբովյանը և նրա գրական ժառանգությունը արդեն երկրորդ հարյուրամյակն է, որ նման վեհ նպատակների են ծառայում։

Մեր ժողովրդի հերոսական ու ողբերգական պատմության շրջադարձային ժամանակների ծնունդն է Խաչատուր Աբովյանը՝ հայության պատմական կյանքի ու քաղաքական որոնումների արտահայտիչը, բանաստեղծական անկեղծ ու սրտաբուխ խոսքի չգերազանցված վարպետը, համազգային ուսուցիչներից ու դաստիարակներից ամենաանձնվերներից մեկը, գրական նորարարը և հումանիստ մտածողը, նոր շրջանի քերթության ու մանկավարժության հիմնադիրը, ժողովուրդների հոգևոր մերձեցման ու վերածնության խանդավառ ջատագովը, Հայաստանի նոր պատմության մեջ ռուսական տերության խաղացած բախտորոշ դերի հետևողական արծարծողն իր գեղարվեստական երկերի մեջ և հանրային ու մանկավարժական ամենօրյա գործունեության ընթացքում։

Աբովյանը մեծ հայրենասեր էր, մշտապես հայության բախտով ու ապագայով մտահոգված, որի խոհերն ու երազանքները շարունակ դառնում էին օտար, բարբարոսական լծից իր ազգակիցների փրկության, Ռուս տերության հովանու տակ նրանց համախմբելու և դարերով կորցրած պետականությունը վերականգնելու շուրջ։ «Ես չունեմ այլ նպատակ; բայց եթե՝ ապրել ու գործել հայրենիքիս մեջ, մեռնել հայրենիքիս համար և իմ նվազ շունչը, իբրև խունկ, ծխել նախահայրերիս աճյունների առջև»,— գրել ու հայտարարել է նա բազում անգամներ։

Հայ և համաշխարհային մշակույթի պատմության մեջ, ընդհանրապես, սակավաթիվ են այն գրողներն ու արվեստագետները, որոնց հայրենաբաղձ զգացումներն ու փայփայած իդեալները, սիրտն ու հոգին այնպես ցայտունորեն դրսևորված լինեին իրենց ստեղծագործությունների մեջ, իսկ ապրած կյանքն ու այլազան առնչություններն էլ նույնպիսի վարակիչ անմիջականություն ու գրավչություն ունենային, ինչպես իրենց իսկ թողած գրքերը, ստեղծած հերոսները և հյուսած ասքերը։

Աբովյանն այս վերջին կարգի գրողներից է։ Նրա խռովահուզ կյանքը ևս

հետնորդներին նույնպիսի հայրենափրկիչ խոհերի է տրամադրում, ինչպես «Վերք Հայաստանի» վեպն ու մյուս երկերը։

Վերհիշենք ամենասեղմ ձևով նրա կյանքի գլխավոր անցքերը։

Աբովյանը ծնվել է 1809 թվականի հոկտեմբերի կեսերին, ավանդապահ ու հռչակավոր, սակայն տնտեսական հզորությունը կորցրած՝ գյուղական գերդաստանում։ Մանկությունն անցել է պարսից տիրապետության շրջանում, և նա ճաշակել է վերջինիս բերած սարսափները։ Ծնողների կամքով՝ փոքրուց նվիրաբերվել է Էջմիածնի վանքին՝ հոգևոր կոչման նախապատրաստվելու համար, ուր տառապել է հարազատների ու հայրենի հարկի կարոտից, աբեղավարժապետների անհոգի դաստիարակությունից ու դաժանություններից։ Առաջիններից մեկը հայ իրականության մեջ՝ Խ. Աբովյանը ողջունել, իսկ գեղարվեստական ստեղծագործությունների մեջ ներբողել է Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, ընութագրելով այն «մեր կենաց փրկության առավոտ»։ Հետո բախտն Աբովյանին հանդիպեցրեց հայ ժողովրդի անկաշառ բարեկամ, հումանիստ մտածող և գիտնական-մանկավարժ, Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտին. առ ոչինչ համարելով սնապաշտական արգելքները և պատռելով լեգենդների դարավոր մշուշը՝ նրանք համաշխարհային լեռնագնացության պատմության մեջ առաջինը բարձրացան բիբլիական Արարատի գագաթը։ Այսօրինակ «սրբապղծության» համար Աբովյանը հալածվել ու նզովվել է ամբողջ կյանքում։ Փոխվում է այնուհետև Աբովյանի կյանքի ընթացքը։ Հեռանալով հայրենիքից՝ նա կրթվում ու դաստիարակվում է Մերձբալթյան Դորպատի համալսարանում, հետո, վերադառնալով Հայաստան՝ հրաժարվում է հոգևոր կոչումից և մինչև մահ գործում Անդրկովկասի կրթական մարզերում՝ ուսուցչություն անելով Թիֆլիսի և Երևանի գավառական դպրոցներում և իր իսկ հիմնադրած ուսումնարանում, որի նպատակը ժողովրդական դպրոցների համար ուսուցիչներ ու գաղափարակիցներ պատրաստելն էր։ Հայ ու հարևան ժողովուրդների՝ վրացի ու ադրբեջանցի մանուկների կրթությունն ու դաստիարակությունը նրան գերագույն բավականություն էին պատճառում։ Հայրենի ետադեմներից և ցարական պաշտոնեությունից կրած հալածանքներին հիմա էլ վերջ չկար. Աբովյանը տառապում էր նաև ընտանեկան հարկի տակ ստեղծված դժոխքից... 38 տարին լրացած՝ նա անհայտացավ խորհրդավոր հանգամանքներում, 1848 թ. ապրիլի 2-ին։ Վերջին պարագան ծնունդ է տվել բազմաթիվ լեգենդների։ Մանավանդ որ նրա կյանքի թվածս անցքերից շատերն, ինքնըստինքյան, կարծես, զարմանահրաշ վիպասքներ լինեն, որոնք ընթերցողներին և ունկնդիրներին հափշտակելով գլխավոր հերոսի (այսինքն՝ Աբովյանի) անսովոր անհատականությամբ ու ողբերգական ճակատագրով՝ տրամադրում են մարդասիրական ու հայրենասիրական ազնիվ խոհերի ու խիզախումների։

Ապրելով ծանր ու դժվարին ժամանակներում՝ քաղաքական ստրկության, տնտեսական թշվառության և հոգևոր խավարի պայմաններում, երբ խաթարված էր ազգության քաղաքական ու մշակութային կյանքը, և հայ հայրենիքը բաժան-բաժան էր դարձել հարևան հզոր ու թշնամական տերությունների միջև, որոնք ամեն կերպ խանգարում էին Հայաստանի վերամիավորմանն ու վերածննդին, Աբովյանը մինչև վերջին շունչը մարտնչեց ընդդեմ ներքին հետադեմ ուժերի և օտար բարբարոսական լծի՝ հանուն ազգային համախմբման ու հոգևոր վերածնության։

Հայրենիքի ու ազգային ավանդների պաշտպանության մասին ժամանակակիցներին ու հետնորդներին ուղղված նրա պատգամները սուրբ են ու նվիրական նաև այսօր։

Օրհնեցե՛ք ռուսների մուտքը Հայաստան, համախմբվեցե՛ք, միմյանց սիրեցե՛ք և օգնեցե՛ք,— ավանդել է Աբովյանը, և մենք հավատում ու լսում ենք նրան։ «Շունչդ տո՛ւր, հոգի՛դ, բա՛յց fn հայրենիք մի՛ տար թշնամյաց...»,— պատգամել է նա, ապա նաև՝ խոսքն ուղղելով հետնորդներին, աղերսել ու հորդորել՝ երբեք չմոռանալ և ընդմիշտ գործել հանուն հայ հայրենիքի շահերի.

«Թե ազգասիրությունն ու հայրենասիրությունը ձեզ վնաս տա, անիծեցե՛ք ինձ, թե օգուտ՝ օրհնեցե՛ք ու լսեցեք»,— և մենք օրհնում ենք նրա հիշատակը ու լսում։

Շուրջ 25-ամյա ստեղծագործական կյանքի ընթացքում Աբովյանի ստեղծած քնարական ու հայրենասիրական երկերի ու խորհրդածությունների նյութն ու քննության առարկան Հայաստանի ապագայի և ազգության ճակատագրի հարցերն էին, միջնադարյան մտածողության և օտար բռնապետական լծի տակ ճնշված, շարունակ ձուլման ու ոչնչացման վտանգի առաջ կանգնած երկրի ու ժողովրդի տառապանքներն ու տենչանքները՝ ազատ կյանքի ու գոյատևման մասին։ Մի դեպքում՝ հայրենիքը Աբովյանի համար հեռու-հեռուներում ընկած և մշուշով պատած անհասանելի աշխարհ է, որի սիրուց տանջվում ու տվայտում է նա, մյուս դեպքում՝ բռնության ու տգիտության հարվածների տակ խոցված ու խաչված մի սուրբ էակ, որ կարիք ունի փրկության ու ապաքինման, գուրգուրանքի և բոլորանվեր աջակցության։ Այս առումով՝ առանձնակի նշանակություն է ստանում Աբովյանի ստեղծագործության և ողջ հայ գրականության գլուխգործոցներից մեկը՝ «Վերք Հայաստանի» վեպը, հայրենասիրական ու մարդասիրական զգացումների այդ անշեջ հնոցը, ազատագրական պայքարի հզոր ներշնչարանը։ «Ահա՛ ձեզ մի գրվածք, որն ամբողջովին «հեղինակի արյունով» է շաղախված, ամբողջովին բանաստեղծություն ու անկեղծ ոգևորության արտահայտություն է», որը «Սրբազան ոգևորությամբ է լցնում կարդացողի սիրտը»,— ասել է մարքսիստ-տեսաբան ու նրբաճաշակ արվեստաբան Ստեփան Շահումյանը։ «Այդ աշխատության մեջ մարմին է առել ազգի հոգին, ազգի ներկա վիճակը, ազգի հասկացողությունը»,— արձանագրել է հեղափոխական մտածող Միքայել Նալբանդյանը։

«Վերք Հայաստանին» նաև նոր ժամանակների հայոց ազգային կյանքի ու մտածողության հայելին է, մեր ազատագրական որոնումների ու առաջին հաղթանակների հերոսապատումը, ռուս մեծ ազգի հետ մեր բարեկամության ու եղբայրության գրական դաշնագիրը, պարսից դժոխքից հայության փրկության ու վերածնության արդար ջատագովությունը, մաշտոցյան գրերով երբևէ հավերժացված անկեղծ ու սրտառուչ խոսքը։

Աննախադեպ են Աբովյանի ծառայությունները հայ հայրենիքին ու նրա հոգևոր մշակույթին՝ որպես բանաստեղծական փայլուն մտահղացումների իրագործող ու գրական նորարար, հայ նոր դպրոցի և մանկավարժության հիմնադիր, ականավոր ազգագրագետ ու բանասեր, հայրենական արևելագիտության նշանավոր դեմքերից մեկը։ Աբովյանը վերածնել ու զարգացման բարձր աստիճանի է հասցրել դարավոր հայ մշակույթի հայրենասիրական ու հումանիստական սկզբունքները, հայրենի քերթությունը դուրս բերել ներանձնացումից ու դոգմատիզմի փակուղուց, հարստացրել այն ժամանակի եվրոպական գրական դպրոցների գեղագիտական առաջավոր փորձով։

Աբովյանի անձի ու ստեղծագործության համազգային նշանակության վերարժևորումը ամենարնդհանուր ձևով մեզ շատ հեռուն կտաներ, ուստի հիշենք նրա կարևորագույն ծառայություններից մեկը ևս. Աբովյանն, ըստ էության, առաջինն է մեզանում, որ համակողմանիորեն արժևորել է ժամանակի հայ մարդու մտածողության և զգացումների հայտարարն հանդիսացող խոսակցական աշխարհաբարին քաղաքացիություն տալու և այն գրականության և դպրոցական ուսուցման լեզու դարձնելու խնդիրը՝ տեսական և գործնական առումներով։ Իր գեղարվեստական կարևոր գործերը և ուսումնական ձեռնարկները նա գրել ու կազմել է ընդհանուրին հասկանալի աշխարհաբար լեզվով, թեպետև քիչ չեն նաև գրաբարով հորինած բարձրարժեք ստեղծագործությունները։ Նման պարտադրանքի պատճառն Աբովյանի այն անխախտ համոզումն էր, ապա և՝ դարերի փորձը, որ երբ պետականությունը կորցրած ժողովուրդները կորցնում էին նաև միասնական լեզուն, ապա շատ-շուտով նրանց գլխին կախվում էր փոշիացման ու ոչնչացման վտանգը, մանավանդ որ նման վիճակը ձեռնտու էր միայն ու միայն օտար տիրողների համար։ Հետևաբար՝ առա-

ջադրելով համազգային լեզվի խնդիրը, Աբովյանը բորբոքում էր ազգային ինքնուրույնության ու միասնության գաղափարը, մատնանշում հայության գոյատևման այն գլխավոր նեցուկը, առանց որի աներևակայելի էր պետականությունը կորցրած ազգության կյանքը. «Ա՜խ, լեզուն, լեզուն. լեզու որ չլի, մարդ ընչի՞ նման կըլի։ Մեկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն ա ու հավատը։ Լեզուդ փոխի՜ր, հավատդ ուրացի՜ր, էլ ընչո՞վ կարես ասիլ, թե ո՞ր ազգին ես»,— մեկ անգամ չէ, որ ասել է Աբովյանը։

Իր լուսավորական ծրագրերով և գործունեության սլացքով՝ Աբովյանը դուրս է գալիս հայկական շրջանակներից՝ դառնալով համակովկասյան, համառուսական երևույթ։ Նրա շարունակական մտորումների և հոգածության առարկան ո՛չ միայն իր ազգակիցներն էին, այլև անդրկովկասյան, նաև՝ ասիական բոլոր ժողովուրդները, վերջիններիս բախտն ու ապագան, նրանց պայքարը հանուն տնտեսական բարօրության, լուսավորության ու քաղաքակրթության, հանուն նոր ժամանակների ոգուն ու պահանջներին համապատասխանող դրպրոց, գրականություն ու արվեստ ստեղծելու։

Աբովյանը հարևան ժողովուրդների կյանքից է առել իր ամենաքնարական ստեղծագործություններից մեկի՝ «Թուրքի աղջիկը» նովելի նյութը, գրել է քրդերի և եզդիների մասին պատմա-ազգագրական ուշագրավ ուսումնասիրություններ, որոնք տպագրվել են դեռ իր կենդանության օրերին, աշխարհագրական մեծ գյուտերի պատմությանը նվիրված՝ «Ամերիկու լիս քցիլը» ակնարկը, ուր ջերմ տողեր կան Ասիայի, Աֆրիկյան մայրցամաքի և ամերիկյան բնիկների մասին, բողոքել է եվրոպական գաղութարարների կատարած սանձարձակությունների դեմ այդ աշխարհամասերում։

Անդրկովկասի և, ընդհանրապես, ասիական ժողովուրդների մշակութային կյանքի տարբեր ոլորտների բարվոքման խնդիրներից բացի, Աբովյանը երկար է խորհել նաև նրանց համար խաղաղ կյանքի պայմաններ ձեռք բերելու մասին, որոնց մեջ միայն կբարգավաճեին իսկական մշակույթն ու լուսավորությունը, տնտեսական արդասավոր գործունեությունը։ «Թե ասուված կտա՝ մեր ասիացիք էլ քիչ-քիչ աչքները բաց կանեն, էն ժամանակը չեն թողալ, որ ամեն հայվարա մարդ իրանց վրա բերան բաց անի»,— գրել է Աբովյանը։ Այս որոնումներն էլ ահա՛ նրա հայացքը դարձնում են դեպի Ռուսաստան՝ Կովկասի և Ասիայի ժողովուրդներին ռուս մեծ ազգի հովանավորության տակ առնելու, նրա հետ հոգեպես մերձեցնելու համար։ Աբովյանը երազում էր այն օրվա մասին, երբ ռուսների օգնությամբ Թուրք լծից կազատագրվեր նաև արևմտահայությունը, և կվերամիավորվեր Հայաստանը, երբ կվերաշինվեր Անին՝ հայոց վերածնության վեհ խորհրդանիշը, որին են ուղղված նրա իդեալ հերոսների հայացքն ու բաղձանքը։

1836 թ. գարնանը պատրաստելով մի ուշագրավ զեկուցագիր հայ և անդրկովկասյան ժողովուրդների տնտեսական ու մշակութային կյանքի բարելավման ուղիների վերաբերյալ, որն այնուհետև քննության է հանձնվում Ռուսաստանի պետական հաստատություններին, և անկեղծորեն իր շնորհակալությունը հայտնելով ռուս տերությանը՝ օտար բռնապետական լծից հայությանն ազատագրելու և իր հզոր արծվի թևերի տակ առնելու համար, Աբովյանը ավելի հեռուն գնացող հարցեր է շոշափում. «Իմ անխախտ համոզումն է,— գրել է նա,— որ միայն Ռուսաստանն է ի վիճակի ասիական ժողովուրդների համար նվաճել նրանց սրտանց տենչացած երջանկությունը... Ռուսաստանի հուժկու բազուկը պետք է և կարող է իրագործել դա ու հաստատել մարդկության այս առաջին օրրանում»։ Եվ սա միայն Աբովյանի համոզումն ու տենչանքը չէր, այլև նրա ժամանակակիցներից շատերի։ 1844 թ. ամռանը շրջագայելով իրանական ու թուրքական գավառներում և շփվելով տեղական հայ, թուրք, պարսիկ ու քուրդ ժողովուրդների հետ, Աբովյանը շարունակ լսում էր նրանցից, թե ինչ լավ կլիներ, եթե ռուսաց ձեռքն անցնեին այդ երկրամասերը։ Նրա պարզամիտ զրուցակիցները իրենց զարմանքն էին արտահայտում, որ Ռուսաստա-

նի նման մի հզոր տերություն հանդուրժում է իր կողքին Մակուի խանի և Բայազետի փաշայի նման նողկալի հարստահարիչների։

Աբովյանը մեծ գրող ու հանրաճանաչ մանկավարժ էր, հռչակված ողջ Եվրոպայում, բայց էությամբ ողբերգական անհատականություն, սեփական ազգությունից, իբրև ստեղծագործող, չճանաչված ու չգնահատված։ Իր կենդանության օրոք նա բախտ չունեցավ տպագրված տեսնելու մայրենի լեզվով հորինած գեղարվեստական ստեղծագործություններից և ոչ մի էջ։ 1830—40-ական թվականների ռուսական և գերմանական մամուլում նա հրատարակեց մի շարք պատմաազգագրական և ուղեգրական բնույթի հոդվածներ, իսկ հայերեն լեզվով՝ գրեթե ոչինչ։ «Նախաշավիղ կրթության» խորագրով ուսումնական ձեռնարկը՝ մայրենի լեզվի ուսուցման և բարոյական կատարելագործման գաղտնիքներն ամփոփող այդ հրաշք մատյանը, որի տպագրությունն սկսվել էր 1839 թ. սկզբներին, կիսատ մնաց և լույս աշխարհ չհանվեց, որովհետև Թիֆլիսի գիմնազիայի մանկավարժական խորհուրդը՝ հենվելով հայ գրախոսների տված բացասական կարծիքների վրա, նպատակահարմար չգտավ գրքի գործածությունն երկրամասի գավառական դպրոցներում։ Ինքը միջոցներ չուներ երկերը հրատարակելու, իսկ գրականության նկատմամբ ազգային պաշտպանություն և հոգատարություն չկար։

Աբովյանի հայտնությունն ու համազգային ճանաչումն, իբրև գրողի ու մեծ հայրենասերի, եկավ մահվանից հետո միայն։ Նրա գրական ժառանգությունն երկար ժամանակ մնալով անտիպ՝ աստիճանաբար սկսեց հրատարակվել 1850-ական թվականից միայն, շնորհիվ նրա աշակերտների ու գաղափարակիցների ջանքերի, որոնք Աբովյանի գրական ավանդներն ու հայրենասիրական պատգամները փոխանցեցին հայ 60-ականներին՝ բոցաշունչ հեղափոխական Միքայել Նալբանդյանին ու մյուսներին։ Սկսվեց մեծ գրողի ու մտածողի հետմահու մասնակցությունը մեր ազգային կյանքին, որ շարունակվում է նաև այսօր։ Աբովյանը դարձավ հայ իրականության ամենաժողովրդական գրողներից ու գործիչներից, սկսեց ազդել և ուղղություն տալ հայոց գրական կյանքին ու ազատագրական պայքարին։ Նրա ստեղծագործությունը գրական ուսումնառության իսկական դպրոց էր, ազատասիրության, մարդասիրության ու հայրենասիրության հզոր ներշնչարան և այնուհանդերձ՝ Աբովյանի իսկական հայտնությունն ու ժողովրդականությունը սովետական ժամանակների արդասիք է։ Անցյալներում հայտնի նրա բոլոր երկերը ամփոփված էին մի գրքում՝ լույս տեսած 1897 թ.։

Սովետական Հայաստանի կառավարության որոշումով՝ 1947—1961 թթ. ընթացքում ՀՍՍՀ գիտությունների ակադեմիան հրատարակեց Աբովյանի «Երկերի լիակատար ժողովածուն»՝ բաղկացած տասը ստվար հատորից։ Վերջին, ավելի քան քսան տարիներին հայտնաբերվել են Աբովյանի բազմաթիվ անհայտ ու կորած ստեղծագործություններ, որոնք կարող են կազմել լրացուցիչ մի քանի հատոր։ Բացի այդ՝ Աբովյանի գլխավոր ստեղծագործությունը թարգմանված է ռուսերեն և Սովետական Միության ժողովուրդների մի շարք լեզուներով։ Նրա հիշատակը հավերժացնելու ուղղությամբ կարևոր քայլեր են արված. այն տունը, որտեղ ծնվել է Աբովյանը, վերածվել է թանգարանի, նրա անունով կոչել են միջնակարգ ու բարձրագույն դպրոցներ, հիմնել նոր քաղաք։ Սովետահայ գիտնականները արդյունավետությամբ հետազոտում են Աբովյանի կյանքի և ստեղծագործության հարցերը, նրա անձնական ու գրական առնչությունները հայ, ռուս և համաշխարհային գրական-մշակութային գործիչների հետ, քննվում ու լուծվում են նրա ստեղծագործական կյանքի ու կենսագրության առեղծվածները։

Աբովյանի ծննդյան 175-ամյակը, որ հանդիսավորությամբ նշվում է այս տարի և վերածվել է մշակութային մեծ տոնի, լավագույնս կնպաստի նրա գրական ժառանգության առավել լայն ժողովրդականացմանը, ռուս ժողովրդի հետ հայության և սովետական մյուս ազգերի հոգևոր մերձեցմանը, այն սուրբ գործին, որի համար տքնել, որի մասին գրել ու պատգամել է Աբովյանը.

«Ռուս անունը,— ասել է նա,— պետք է մեզ համար լինի նույնպես սուրբ, ինչպես և նրա արյունը, որով մենք ազատվել ենք ընդմիշտ, նաև՝ այն հովանավորությունը, որի ներքո մենք բարգավաճում ենք՝ կատարելապես պաշտպանված լինելով մեր հավատքի, մեր հայրենիքի բոլոր թշնամիներից։ Աշխատենք, ըստ մեր կարողության ու հնարավորության ձեռք բերել օգտավետ գիտելիքներ, կրթել մեր միտքն ու սիրտը, ձեռք բերել ռուս լեզվի գիտությունը և բարի քաղաքացիներ լինել։ Սրանով, հենց միմիայն սրանով, քան թե մեկ այլ ճանապարհով, մենք կարող կլինենք միանալ ռուս մեծ ազգի հետ, որի անունն իսկ ներշնչում է ամենքին, մինչև իսկ օտարերկրացիներին, պատկառանք և անձնվիրություն...»։